ՊԵԳԱՍՅԱՆ ԹՌՉՆԻԿ

Օրագիր տասնօրյա

Խմբագիր-տնօրեն Գրիգոր վ. Ալեաթճյան

Պոլիս

Պեգասյան թռչնիկ 1863 թ. փետրվարի 22, № 4

«Ընթերցող Եվրոպայի մեջ ստորին լրագիր մը, 1000 կամ 2000 բաժանորդ ունի, սակայն ամենեն պատվավոր հայ լրագիր մը հազիվ 500 կամ 600 բաժանորդ ունի»:

Պեգասյան թռչնիկ 1863 թ. հունիսի 22, № 12

«… Իսկ Արշալույս Արարատյանին խմբագրին գալով, հիրավի ա՛լ ըսելիքնիս կորուսած եմք, վասն զի համառ է, նա՝ համառ պիտի մնա, ՝ պիտի հրատարակե ինչ որ դեմ է ճշմարտության, օրինավորության, ՝ ինչ որ նախատինք կրնա բերել ազգերնուս վրա։ Այս ըսածնուս օրինակ կրնա ըլլալ Իզմիրի Վասպուրական թատրոնին դերասաններուն վրա խոսած ժամանակ անոնցմե մեկին գիշեր մը բանտ մտնելը պատմելը, որ խիստ հեռի է խմբագրական օրենքներեն ՝ ճշմարիտ օրինավորութենեն… սակայն Արշալուսո համար չէ օրինավորությունը, նա թե որ օրենք մը ունի որ կը հարգէ, ան ալ համառությունն է»:

Պեգասյան թռչնիկ 1864 թ. հունիսի 8, № 15

Բարբաջանք - «Արշալուսո խմբագիրը յուր ծերության վերջին օրերուն մեջ ջղային հիվանդության մը ենթակա եղած ըլլալու է, ՝ ասոր պատճառն ալ կամ օդերուն խիստ տաք երթալն է, ՝ կամ Զմյուռնիոյ թաղական խորհուրդը։

… Ամեն մարդ գիտե, որ բավական ժամանակ է Արշալուսո դեմ բան մը գրող չըլլալեն զատ, անոր անունն անգամ տվող չկա. հետ՝աբար Արշալուսո այս ցնորական խոսքերը կամ ապագային մեջ պետք եղած փախուստի ճամբան այժմեն հարդարել է, ՝ կամ, ինչպես ըսինք, յուր ջղային հիվանդութենեն առաջացած չոր զառանցանքներ»:

Պեգասյան թռչնիկ 1864 թ. հունիսի 22, № 16

«Զմյուռնիո ազգայիններեն ոմանք, իրենց ապագան ապահովցընելու դիտավորությամբ խնայողական անուն ընկերություն մը հաստատեր են»:

Պեգասյան թռչնիկ 1864 թ. հուլիսի 8, № 17

Զմյուռնիա - Խոսում է Մեսրոպյան ՝ Հռիփսիմյան վարժարանների բարեհաջող վիճակի մասին, աշակերտ-աշակերտուհիների բավարար առաջադիմության մասին։ Դպրոցների առաջադիմությանը խանգարում են եռապետները, որոնք, իրենց գործն առաջ տանելու համար ոտնահարում են մյուսների իրավունքները։

Պեզասյան թռչնիկ 1864 թ. հուլիսի 22, № 18

Ազդարարում է Զմյուռնիայի խնայողական ընկերության ծանր վիճակի մասին, որ ընկերությունը մոտ է փակվելուն։

Պեզասյան թռչնիկ 1865 թ. հունվարի 15, № 26

«Օրենք լրագրության» +

Հոդված Ա. Քաղաքական կամ վարչական նյութոց վրայոք խոսող բնավ որ¨է լրագիր կամ պարբերական թերթ, ո՛ր լեզվավ է ըլլա, թե՛ կանոնավորապես ¨ որոշյալ օրեր, ¨ թե տետրակավ կամ կամ անկանոն կերպիվ հրատարակել, չը կրնար հանվիլ կամ հրատարակվիլ առանց հրամանի կայսերական Կառավարության։

Հրամանն ստանալու խնդիրը հասարակաց կրթության պաշտօնէին պիտի ուղղվի, եթե խնդրոյն հեղինակը Բ. դռան հպատակ է, իսկ եթե օտար տերության հպատակ է՝ խնդրագիրն արտաքին գործոց պաշտօնէին պիտի ներկայացընէ։

Հոդված Գ. Առաջին հոդվածին մեջ հիշված հրամանը պիտի տրվի այն ամեն Օսմանյան հպատակաց, որ 30 տարին լրացուցած են, ¨ տերության պատժական օրինաց մեջ նշանակյալ ոճիրներու կամ հանցանաց համար դատապարտություն մը կրած չեն ¨ իրենց քաղաքային իրավունքը լիովին կվայելեն։

Հոդված Դ. Հրաման ստանալու խնդրագրին հետ հայտագիր մ’ալ պիտի ներկայացվի, հրատարակելի լրագրին տերոջմեն կամ պատասխանատու տնօրենեն ստորագրեալ, ¨ մեջը պիտի նշանակվին հրատարակելի թերթին անունը, պարբերականության պայմանները ¨ ո՛ր տպարանի մեջ տպվիլը։ Տերը, կամ պատասխանատու տնօրենը պարտական պիտի ըլլա իր լրագրին կամ պարբերական թերթին ամեն մեկ թվույն հրատարակության ժամանակ, ստորագրյալ օրինակ մը ղրկել Կ.Պոլսո լրագրական դիվանին, կամ գավառի կուսակալին։

Լրագրին ամեն օրինակներուն ներք¨ տիրոջը կամ պատասխանատու տնօրենին տպյալ ստորագրությունը պիտի գտնվի։

Հոդված Զ. Տերության երկիրներուն մեջ այժմուս գտնված լրագիրները կամ պարբերական գրվածները՝ սույն օրինաց պահանջած հրամանեն ազատ են, ¨ մինչ¨ հիմա անոնց տրված ազդարարություններն ալ վերցած են։

Այն լրագրաց ամենն ալ կրնան շարունակիլ՝ սույն օրինաց սահմանած պայմաններուն ամեն մասամբ հնազանդելով։

Հոդված Է. Ամեն մեկ թերթի կամ տետրակի ներք¨ ստորագրություն դնողը պատասխանատու պիտի ըլլա մեջը գտնված այն ամեն հոդվածներուն ու խոսքերուն, որոց հեղինակը թե¨ ուրիշ է, բայց ստորագրություն չունի։ Իսկ եթե դատաստանի ներք¨ ինկած հոդված մը կամ խոսք մը ուրիշե ստորագրյալ է, թերթին կամ տետրակին ներք¨ ստորագրութիւն ունեցողն ալ՝ հոդվածին հեղինակին կամ հեղինակներուն հետ իբր¨ մեղսակից պիտի դատվի։

Հոդված Ը. Ամեն լրագիր պարտական է յուր առաջիկա երկու մոտագույն թիվերեն մեկուն մեջ հրատարակել Կ.Պոլսո լրագրական դիվանեն ¨ գավառաց մեջ ալ տեղական

իշխանություններեն հրատարակման համար իրեն ուղղվելիք պաշտոնական գրությունները ¨ անոնց հրատարակությունն ալ ձրի պիտի ըլլա։

Հոդված Թ. Քաղաքական կամ վարչական նյութոց վրա խոսող որ¨է լրագիր կամ պարբերական թերթ՝ որ Կայսերական կառավարության թշնամություն կամ հարձակում ընելու նպատակավ օտար երկրի մեջ հրատարակվին, չեն կրնար վեհափառ Սուլթանին երկիրները մտնել ու շրջաբերիլ։

(Օրենքն ուժի մեջ է 1865թ. հունվարի 1-ից)

Պեզասյան թռչնիկ 1865 թ. հունվարի 31, № 27

Զմյուռնիա - «Ս.Ստեփաննոս եկեղեցու արձանները քանդել են Ալփիարյան Մարտիրոսը ¨ եղբայրներ Վարպետյան Պողոսն ու Հակոբը։ Դեպքը տեղի է ունենում հունվարի 21-ին, հինգշաբթի առավոտյան։ Սրանք բանտարկվում են, բայց եռապետները գիշերը գնում են Կուսակալի մոտ ¨ Պատրիարքի ուղարկած նամակը նրան տալով, ազատում են կալանավորվածներին։ Սա նոր խռովությունների ու գժտությունների պատճառ է դառնում եռապետների ու ժողովրդի միջ¨։ Առաջնորդի փոխանորդ Չիլինկիրյան Հակոբոս վարդապետը իր պաշտոնից հրաժարվում է ¨ Պոլիս գնում»։

Պեզասյան թռչնիկ 1865 թ. փետրվարի 28, № 29

Ոգի Եռապետական - «Եռապետական ոգին, որ շատ մը մարդիկներու իբր¨ բնական հատկություն եղած է, ուրիշ բան չէ, բայց եթե տեսակ մը գազանաբարոյություն, ուսկից անթիվ չարիքներ առաջ կու գան, թագավորապատիվ իրավունքը խել մը չքուրիներու կամաց կը զոհվի ¨ արդարությունը անոնց ոտքին տակ ճնշվելու աղեկեզ դժբաղդության կը վիճակի, ¨ մարդուս բարեխոհ միտքը ու ազատ կարծիքը ակամա ստիպյալ՝ շողոքորթական դիմակին ենթակա կըլլա ողբալի դիրք մը առնելով։

… Արդ՝ աղեկ գիտցեք, որ Հայուն առաջադիմության (զմյուռնիացիների, Ս.Շ.) անզուսպ արգելքը ու թումփը այս վատթար Եռապետությունն է. զանի բռնաբարողը ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ է, անոր երջանկությունը մեռցնողը ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ է, անոր բարօրությունը թշվառացնողը անմիաբանությունը չէ, այլ ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ է։

Վերջապես, անոր սերը ¨ միությունը փեռեկտողը ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ է»։

ՀԱՅԿ ԱՐԱՄՅԱՆ

Պեզասյան թռչնիկ 1865 թ. մարտի 22, № 30

Հաշտվինք - (Զմյուռնիայի եռապետները հաշտվել են առաջարկում)

Անիրավություն - («Ժոն-Ժանների» պարահանդեսի մասին գրած՝ «Ծաղիկ» օրագրի հեղինակին բանտարկել տալու մասին։ Այդ արել են եռապետները, որոնք «Ծաղիկը խափանելու ¨ անոր խմբագրին՝ դպրոցական դասատվությունը դադարեցնելու» անգամ փորձ են արել)։

Գրիգոր Չիլինկիրյանը 28 օր բանտարկության դատապարտված էր, սակայն 5 օր է նստում ¨ շնորհիվ տեղի կուսակալ Ռեշիտ-Ահմեդ փաշ., ԷՄԲԱՐՍԻԱԼ լրագրի խմբագիր Մ. Էդուարդ էֆենդու ¨ թաղական խորհրդի ատենապետ Յաղուբ էֆենդու, մարտի 24-ին ազատ է արձակվում։

Պեգասյան թռչնիկ 1865 թ. ապրիլի 31, № 33

«Պրատիճ կոչված Եվրոպական սրճարանը (Իզմիրում-Ս.Շ.), ուր գրեթե ամեն իրիկուն հայ երիտասարդաց խումբ մը հոն կը ժողվին ոմանք պիլիարտո խաղալու, ¨ ոմանք Գերմանուհի օրիորդաց երաժշտության քաղցր ներդաշնակությունը մտիկ ընելու»:

«Զմյուռնիացւոցն սովորական ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆ է. այսօրվան պաշտածը վաղը այրել, երեկ դեռ օվսաննա կ՚աղաղակեր Ծաղիկին համար, ¨ այսօր կը խաչե զայն ավելի ճիշտը խոսիմ քեզի. Ծաղիկը Իզմիրի մեջ բարեկամ անգամ չունի, ո՞ւր մնաց, որ պաշտպան ունենա»:

Պեգասյան թռչնիկ 1865 թ. սեպտեմբերի 20, № 37

Մեսրոպյան վարժարանում տաճկերենի ուսուցիչը Ծաղկի խմբագիրն էր (Գրիգոր Չիլինկիրյանը – Ս.Շ.), որը դպրոցից հեռացված էր «Ժոն-Ժանների մասին հոդված գրելու համար»:

Ազդարարվում է Կարապետ Շահնազարյանի մահը։ Բանաստեղծություն է գրել Ա.Ա.Այվազյանը։

Պեգասյան թռչնիկ 1865 թ. նոյեմբերի 1, № 41

Սիրուն թռչնիկ Զմյուռնիա 1865թ. հոկտ. 17

… Իզմիրցի հայը սիրուհի մը կը ինկարկե, կ՚պաշտե, ¨ արդարացի ավյունով մը համակված աշխարհք կը մոռանայ, Ժյուլիին համար նավակին մը մեջ տիեզերքը մոռցող Ռաֆայելին պես։

Ո՞վ է այդ սիրուհին – Ոսկանյանը, իրոք, Ոսկանյանը Իզմիր եկավ ¨ յուր գալուստը տոնախմբություն մ՚ է քաղաքիս ազգայիններուն համար։ Ինչ որ եղավ Կարիպալտիին ազդեցությունը Ալպիոնի զավակաց համար, նույնը կըլլա ¨ Ոսկանյանին գալուստը Իզմիրցվոց համար։ Եթե Իտալիո միության շահատակը յուր բազուկին ¨ թուրին ազդումովը մեծ կար¨որություն ուներ անկլիացիին առջ¨, Ոսկանյանն ալ մտքին լույսովը ¨ տաղանդին փողփողումովը արդար¨ Ազգային յառաջադիմութեան իբր արիագույն դրոշակակիրը, արժանի էր ոչ միայն Իզմիրի հայոց, այլ¨ ամբողջ Ազգին գիրկը ընդունվելու ¨ սքողվելու։ ՈՒսումնավորը ¨ անուսը, ազնիվը ¨ անազնիվը, հարուստը ¨ աղքատը քանի մ՚օր դեպի միահարկ տուն մը դիմեց, հայ գրագետին գալուստը շնորհավորելու, այո, անոր ձեռքը թոթվելու, այնէ համակիր ակնարկ մը վայելելու մին բարեկամությունը շնհալու, մյուսն ալ անոր եփուն ուղեղեն քանի մը կարծիք մուրալու, ¨ ոմանք ալ «Ոսկանյանը կը ճանչնամ» ըսելու համար. ո՜ օրինավոր փառասիրություն։ Ոսկին ¨ իշխանությունը խնկարկելու սովորող հայը այսօր բացառության անլուր օրինակ մը կու տա ¨ փառավոր անունի մ՚ առջ¨ խոնարհելով կը պատկառի։ Պետք է ուրախանալ, վասն զի իմացականությունը այսպես հաղթանակ մը կը կանգնե ¨ տգիտությունը կապտակե, անոր ոչնչությունը հեգնելով։ … Ոսկանյանը նույնպես, քաջապես գիտե անշուշտ ¨ կ՚զանազանե կեղծը անկեղծեն, շահախնդիրը՝

անշահախնդիրեն։ Իզմիրի հայը այսօր անկեղծորեն ՄԻՏՔ ՄԸ կտոնախմբե, ՀԱՆՃԱՐ ՄԸ կշոյե ¨ ԳԻՏՈՒԹԵԱՆ գալուստը կշնորհավորե եռանդով. անոր այս բարի ընթացքը լոկ զգացումի ¨ հետաքրքրության հետ¨ություն է։ Տաղանդի սիրահարիչ է այս, որ բնական է, որոնք որ գիտեն անոր հարգը։ Այս տեսակ սիրահար մը անկեղծ ¨ հաստատուն մնալու համար կ՚պարտավորվի գիտնալ, թե տաղանդը վարդ մ՚ է, որ ունի նա¨ փուշ։ Վարդին գույնը ¨ հոտը սիրող մը կը պարտավորի ընդունիլ ¨ սիրել նա¨ անոր փուշը։ Ճշմարտ սերը այս է։

… Ես ¨ս տեսա Ոսկանյանը, խոսեցա հետը ¨ առջի անգամին զգացի, թե քսանամյա ուսումներով ¨ ընթերցումներով սնված պատկառելի ուղեղի մը հետ է գործս։ Ասով ըսել չեմ ուզեր, թե յուր ամեն գաղափարները մաթեմատիկական պատգամներ են. նույն իսկ ինք հեռի է այդպիսի փառամոլութենե մը ¨ կենացը մեջ կարծեմ ¨ ոչ վայրկյան մը կրցած է եր¨ակայել, թե Ս. Պետրոսի հաջորդին պես անսխալելի է։

Բայց այսպիսի մտքի մը հետ բանակցող մը, եթե նա¨ հակասություն մը նշմարե անոր բղխումներուն մեջ, չ՚նշմարելու կուգա սիրով, որպեսզի բղխումը չընդհատի։ Ամենեն անլուր ¨ նոր գաղափարները բանագետ ունկնդրի մը համար անդիմադրելի հրապույր մը ունին ¨ եթե անհատական կյանքի ու մարդկային ընկերության իրական հարաբերությանցը նկատմամբ շօշափելի օգուտ մ՚ալ չընծայելու ըլլան, գեթ ուշադիր մտքի մը զուարճություն ¨ մտածելու առիթ կուտան։

Միրազո յուր հակառակորդներեն մեկուն համար ըսած է. «ՔԱՆԹ ԻԼ Ա ԹՕՐ, ԺԸ Լ՚ԵԳՐԱԼ, ՔԱՆԹ ԻԼ Ա ՐԵԶՈՆ, ԺԸ ՏԻՍԲՈՒԹ» («Երբ նա սխալվում է, ես լռում եմ, երբ նա ճշմարիտ է, ես վիճում եմ»): Մշակված միտքերու հարմար ճշմարտություն մ՚է այս, զոր նա¨ Ոսկանյանը կրնա կրկնել յուր հակառակորդաց համար, առանց կարմրելու տասն ¨ հինգ տարեկան կույսի մը պես։ Այս գովեստը, իբր օրինավոր տրիտուր արժանավորության, հրապարակավ կու տամ իրեն, հրավիրելով զինքը, որ ընդունի զայն, եթե, ինչպես կըսէ Լաբրովեր, չուզեր անագորույն մը համարվիլ արդարացի գովեստի մը անզգա ըլլալով։ …Ազգը փորձառու ¨ հառաջադիմության հինգօրյա զինվորներու (վեթերան) գրիչին կը կարոտի. ինչո՞ւ ուրեմն կը լռէ Ոսկանյանը, քանի որ ինք ազգային առաջադիմության համար զոհվող մ՚է, ¨ քանի որ այսպիսի լռություն մը հակասական է յուր ազգասիրության հետ։ Անիկա յուր այս լռությունը արդարացնելու համար գուցե ընթերցող չունենալը, յուր միտքը ¨ լեզուն հասկցող չգտնվիլը ¨ ապերախտներե բազմիցս մատնված ըլլալը յառաջ բերե։ Այսպիսի առարկություն մը ըստ իս ¨ նույն իսկ իր սկզբունքին համեմատ ընդունելի չէ։ Թող ինքն ալ ըսե ինչ որ ըսավ Գալիլեոս երկրիս շարժումը գտնելով ¨ անհավատներու հանդիպելովը. ¨ հավաստի ըլլա, թե յուր միտքը ¨ լեզուն հասկըցող ¨ ընդունող կը գտնվի եթե ոչ ԱՅՍՕՐ, գեթ ՎԱՂԸ։ Տգետ բազմության մը ծառայողը ապերախտի մը ծառացած կըլլա շատ անգամ. ՎԱՂԸ փառավորվիլ ուզող առաքինի մը ԱՅՍՕՐ թուքումուր ապրելու պետք է հանձնառու ըլլալ։ Ապագային մեջ ապրիլ ուզող մը կ՚պարտավորվի ՄԵՌՆԵԼ ներկային մեջ։

Դիտավորությունս խրատ տալ չէ Ոսկանյանին, այլ ցավս ¨ անձնական կարծիքս հայտնել է. գիտեմ, որ ոչ միայն խրատի չկարոտիր, այլ նա¨ուրիշներուն խրատ տալու իրավունք ունի ինք։

ՊԵՐՃ

(Սա Գրիգոր Չիլինկիրյանն է)

Պեզասյան թռչնիկ 1865 թ. դեկտեմբերի 20, № 46

Զմյուռնիայեն - «Այժմ Զմյուռնիոյ մեծ մասը գլխեն ոտքեն Ոսկանյան մը բռներ է. ահագին ՏԱՎՈՒԼԻ մը ձայն կ՚ելլե, որն որ Ոսկանյան վզեն կախված է ¨ ամեն մարդ մեկ մեկ նպատակավ ձեռքի փայտովը անոր կը զարնե. ոմանք Սահմանադրությունը մեռցնելու, ոմանք Ոսկանյանի արժեքը ճանչընալուն ¨ ոմանք ալ ՄԱՍԼԱՀԱՐՏԱ ՊՈՒԼՈՒՆԱՅԸՄԻ նպատակավ։

Ոմանք Սահմանադրությունը մեռցնելու նպատակավ, ըսինք։ Որովհետ¨ Սահմանադրապես կազմված ՈՒսումնական խորհուրդը մեկդի թողլով, խել մը մարդիկ ոտքի ելեր «Ոսկանյանը դպրոց պիտի դնենք, որպեսզի դպրոցը բարեկարգվի, սակայն դպրոցին հատկացյալ տարեկան 13.000 ղուրուշ չբավեր» ըսելով բաժանորդագրություն բանալ մը կուզեն։

Ո՛վ չ՚գիտեր, որ Ոսկանյանի նման անձի մը տնօրինությանը ներք¨ գտնված դպրոց մը չ՚յառաջադիմեր, սակայն ով չ՚վկայեր որ բաժանորդագրություն մը բանալու ետ¨է եղող այն խումբին ըրածը Սահմանադրության տրամադրությանը հակառակ է, ¨ ով չգուշակեր, որ անոնց այս ընթացքը Քաղաքական ժողովին ընտրած ՈՒսումնական խորհրդին մեռնելուն, հետ¨աբար խոշոր ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍով մը թաղվելուն պատճառ պիտի ըլլա»։

Եթե այն անձինքը դպրոցին հառաջիմությանը նախանձախնդիր են, կրնային ՈՒսումնական խորհրդոյն ջանյուքը ¨ տնօրենությամբը հանգանակություն մը ընել ¨ զանի Ազգին արկղեն դպրոցին ծախսին վրա ավելցընելով, իրենց նպատակին հասնիլ, սակայն քանի որ այս եղանակավ չեն ուզեր գործել ¨ ուսումնական խորհրդոյն խոսք չեն ձգեր, միտքերնին ԻՆՏԵ ՊՈՒԼՈՒՆԱՅԸՄ չէ՞ մի. Սահմանադրությունը մեռցնել չէ՞ մի։

... Ասանկ թերություններ քանի որ կա Զմյուռնիո մեջ, չէ՛ թե Փարիզեն Ոսկանյանը, այլ Աստուծո աջ կողմեն Քրիստոս ալ գալու ըլլա դարձյալ անօգուտ։

Պեզասյան թռչնիկ 1866 թ. հունվարի 25, № 48

Խել մը Զմյուռնիո լուրեր - Զմյուռնիո ազգային դիվանը յուր դիվանապետն ու դիվանադպիրն ունի. առաջինը կ՚առնե ամիսը 6, իսկ երկրորդը 5 ոսկի, բայց ¨ այնպես, բոլոր դիվանական գրությունները դպրոցի վարժապետաց կ՚ղրկվին գրվելու ¨ չենք գիտեր, թե այս անձանց ազգեն ընդունած ամսականին ինչ բանի համար է։

Զմյուռնիո քաղաքական ժողովը պանքայեն 300 ոսկիի փոխառություն մը ընելով, 140 ոսկիի չափ վարժապետաց մատակարար է։

Պեզասյան թռչնիկ 1866 թ. փետրվարի 10, № 50

«Իզմիրի մեջ քանի մը շաբաթե ի վեր ՈՒսումնասեր անուն ընկերություն մը եր¨ան ելած է, որուն նպատակն է Իզմիրի ¨ անոր թեմերուն վարժարանաց մեջ ուսումն ¨ գիտություն տարածել. դյուցազնակա՛ն նպատակ. բայց իրենք անկախ մնալ ուզելնուն, ինչպես իրենց կանոնադրության Բ հոդվածին մեջ կ՚տեսնվի, անկարող պիտի ըլլան նպատակնին հառաջ տանելու, վասն զի Պոլսո Ազգային վարչությունը, անտարակույս Սահմանադրության պաշտպան, հետ¨ապես անոնց նպատակին ալ արգելք պիտի ըլլա. եթե քաղցրությամբ չկարենա, անշուշտ, բռնությամբ պիտի կարողանա, Օսմանյան հզոր պետության հրամանավ, որպեսզի այս կերպ ընթացքի հետ¨ող

ընկերություններ հետզհետե շատնալով, ազգության իրավունքը չբռնաբարվի ¨ Սահմանադրության մահ չառթե։ Ըստ որում Սահմանադրությունը հանրության օգտին համար է, ¨ սույն ընկերության անկախությունը մասնավոր գավառի մը ժողովրդյան, ուստի հանրությունը բողոքելու ¨ չթողելու է, որ իրեն օգուտը մասնավորին կամացը զոհ ըլլա»։

Մենք կցավինք, որ ՈՒսումնասեր ընկերությունը իր ազգասիրական նպատակը առաջ տանելու համար չ'խոնարհիր ենթարկիլ Սահմանադրության տրամադիր կանոններուն. ավա՜ղ, զի մեկ դարու մեջ հազիվ հազ եր¨ան կ'ելլե այսպիսի ընկերություն մը, ¨ ապօրինաւոր ընթացքով մը կ'քակտուի, որով հասարակության օգտին ալ զրկողություն մը կպատճառի։ Մենք կխնդրենք, որ եթե կարելի հիշյալ ընկերությունը սա անկախության բաղձանքը մարելով, փութա օր առաջ հանձնառու ըլլալ հպատակելու Սահմանադրական տրամադրությանց ¨ ոոպե մը չկորսնցուցած սկսի գործել, որպեսզի հայրենակիցներս վայելեն անոնցմե մատակարարվելիք բարիքը ¨ անոնց անունն ալ անմահանա դարուց ի դար։

1866թ. փետրվարի 7, Իզմիր

(«Ձեր բաժանորդներեն մեկը»)

Նույն համարում - Զմյուռնիո մեջ նոր ՈՒսումնական խորհուրդ մը կազմվեր է, որոյ անդամներն են

Խաչատուր էֆ. Աղազարյան

Պաղտասար Պալթազարյան

Հակոբ էֆ. Եսայան

Պողոս Վարպետյան

Աբրահամ էֆ. Կարապետյան

Հովհաննես էֆ. Միրզայան

Ստեփան էֆ. Տետեյան

Կհուսանք, որ այս նոր ՈՒսումնական խորհուրդը, առանց տղայական կրից հետ¨ելու ¨ Սահմանադրությունը վտանգելու, պիտի ջանա դպրոցին առաջադիմությանը նպաստելով զանի բարոյապես լուսավորել, ¨ ոչ թե ուրիշներու նման նյութապես բռնկեցնել ուզել։